ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«14» 04 2025թ.

№ 41/02-08

«ՈՐՈՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Գ. ԲԱԲԼՈՅԱՆԻՆ
/ Ադանա 79, հեռ.՝ +37444948114, էլ.հասցե՝ payvorot@gmail.com/

Հարգելի՛ տիկին Բաբլոյան,

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի ապրիլի 26-ին հայտարարված լաբորատոր պահարանի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Որոտ» ՍՊԸ-ն, որի հետ 05.06.2024թ. կնքվել է ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Սակայն 26.12.2024թ. ներկայացված զեկուցագրով Պատասխանատու ստորաբաժանումը տեղեկացրել է, որ «Որոտ» ՍՊԸ-ի կողմից ապրանքը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «Որոտ» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/85-1 ծածկագրով պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով 14.01.2025թ. միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև 2025թ. հունվարի 29-ը ներառյալ, ապահովել ներկայացված

տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման մասով՝ 165000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 110000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամի չափով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Հիմնադրամը դիմել է Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Հիմնադրամը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ՝ Հ. ԶԱՔՈՅԱՆ

Կատարող՝ Ե. Հարությունյան
հեռ. 012521608